«Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

Հոդված 9. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանության լիազորությունները

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝

1) ~~մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը.~~

2) ~~իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.~~

3) հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրումների ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նկատմամբ և ձեռնարկում օրենքով նախատեսված միջոցներ.

4) վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ վտանգավոր բեռ փոխադրողի կողմից գրավոր դիմում ներկայացվելու դեպքում իրականացնում է վտանգավոր բեռի ուղեկցումը անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով.

5) տալիս է համաձայնություն վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղու վերաբերյալ.

6) մասնակցում է վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ առաջացած վթարների վերացման միջոցառումներին.

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 9.1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության լիազորությունները

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը՝

1) մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը.

2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.

3) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ: